



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 013

« 24 » Հունիսի 2014թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Ի պատասխան Գավառի Օրհուս կենտրոնի 05.06.2014թ.-ի թիվ AA-010 գրությանը, ՀՀ Բնապահպանության նախարարությունից 17.06.14թ.-ին թիվ 5/12.1/51697 գրությամբ պատասխան է ստացվել 2013թ.-ին «Հիդրո կորպորացիա» ՓԲԸ «Արգիճի» ՓՀԵԿ-ում իրականացված տեսչական ստուգումների մասին՝ թիվ 000081 հանձնարարականի և «Հիդրո կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 06.11.13թ.-ին ներկայացված տեղեկանքի պատճենները կցելով:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն.

1. Ի՞նչ փուլում է գտնվում «Արգիճի» ՓՀԵԿ-ի աշխատանքները 01.06.14թ.-ի դրությամբ:
2. Կատարվա՞ծ են թիվ 000081 հանձնարարականում նշված պահանջները մինչև 01.05.14թ. /եթե այո, կից ներկայացնել գործողությունները հավաստող փաստաթղթեր, նկարներ, եթե ոչ՝ ապա ըստ ՀՀ օրենսդրության ի՞նչ պատասխանատվություն է առաջացրել, համաձայն հանձնարարականի/
3. Գործարկման օրվանից /հաշվի առնելով նաև փորձարկումները/ քանի՞ անգամ է պայթել «Արգիճի» ՓՀԵԿ-ի խողովակները /տրամադրել կազմված ակտերի, արձանագրությունների, կամ որևէ այլ փաստաթղթերի պատճենները՝ ըստ օրերի/ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Լ. Ասոյան